ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՀԱԴՆ ԴՐԻԳՈՐՅԱՆ

Ավանի տաճարը վաղ միջնադարի արժեքավոր և եզակի հուշարձաններից է։ Տաճարների այս տիպի մեջ Ավանը մեզ հասած հնագույն օրինակն է (VI դ. վերջ)։ Նրանում առկա արխայիկ տարրերն ու լուծումները (քիվ, իմպոստ, երեսակալ, շքամուտք, միջանցիկ կամարամահիկով և բեռնաթափող ճեղքերով մուտքեր) հատկանշական են հայկական IV—V դդ. հուշարձաններին (Երերույք, Տեկոր, Քասախ)։ Ավանը կամարներով ու առագաստներով փոխանցման կոմբինացված համակարգի և առագաստների կիրառման ամենավաղ նմուշն է։ Այն նաև միակ կառույցն է, որի անկյունային սենյակները հիմքում շրջանաձև են և ավարտվում են գմբեթածածկերով։ Եվ, վերջապես, Ավանի տաճարը վաղ շրջանի հայ պատմագրության մեջ հիշատակված սակավաթիվ հուշարձաններից է։

Տաճարին անդրադարձել են հայ ճարտարապետության գրեթե բոլոր ուսումնասիրողները։ Կա վերակազմության երկու նախագիծ։ Առաջինը պատկանում է Ռ. Աղաբաբյանին (1947)։ Նախագծի հիմքում ընկած է այն տեսակետը, ըստ որի հայ ճարտարապետության պատմության մեջ Ավանը ներկայացնում է խաչաձև հորինվածքի զարգացման նախապատրաստական՝ մինչհռիփսիմեական շրջանը. տաճարը տեղական և անտիկ ձևերի յուրօրինակ սինթեզ է, ճարտարապետի համար ներշնչանքի աղբյուր է եղել հավանաբար Տրդատի պերիպտերը[1]։ Այս տեսակետը մարմնավորված է նախագծի մեջ. արևելյան ու արևմտյան ճակատները ամբողջ լայնքով առնված են երկթեք տանիքի տակ և Գառնիի հեթանոսական տաճարի նմանությամբ լուծված են եռանկյունաձև ճակատներով։ Նկատենք, որ այս վերակազմությունն ընդունված է մասնագիտական գրականության մեջ։ Վերակազմության երկրորդ նախագիծը Տ. Մարությանինն է (1976)։ Այստեղ ելակետային է այն կարծիքը, որ տաճարն արտաքինից ունեցել է հինգ գմբեթ և «...անկյունային սենյակների ծավալները որոշակիորեն դրսևորվում են տաճարի արտաքին ընդհանուր հորինվածքում»[2]։ Սրա հիման վրա էլ Ավանը նախագծվել է արտաքին հինգ գմբեթներով։

Այս երկու նախագծերի և, անտարակույս, առաջին հերթին հուշարձանի ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ ներկայացված նախագծերն անընդունելի են թե՛ գրանցում տեղ գտած փաստական վրիպումների ու անճշտությունների պատճառով, թե՛ նախագծերի հիմքում ընկած ելակետների առումով։ Եվ, հավանաբար, ելակետային ոչ ճիշտ կողմնորոշման արդյունք է այն փաստը, որ սկզբունքորեն իրարից տարբեր այս երկու վերակազմություններից և ոչ մեկը ծավալատարածական հիմնական լուծումով չի նմանվում նույնատիպ հուշարձաններին։

Տաճարին վերաբերող կարծիքների մեջ մշտապես արծարծվում է գմբեթների հարցը։ Բոլոր ուսումնասիրողները հուշարձանը պատկերացնում են մեկ

---

[1] Р. Я. Агабабян, Реконструкция Авана (Предварительное сообщение), «Сборник трудов ЕрПИ им. К. Маркса», № 3, 1948, с. 268; его же, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, с. 59—60.

[2] *Տիրան Մարության, Ավանի տաճարը և համանման հուշարձաններ, Երևան, 1976, էջ 16։*

գմբեթով, սակայն չմոռանալով հիշատակել, որ ըստ Թ. Թորամանյանի այն ունեցել է հինգ գմբեթ։ Եթե սկզբում այս վկայումը ենթադրության ուժ ուներ միայն, ապա Տ. Մարությանն իր ուսումնասիրության մեջ այն ներկայացնում է իբրև Թ. Թորամանյանի տեսած և արձանագրած փաստ ու վերջինիս հիման վրա արած՝ անհերքելի, կատարյալ համոզվածությամբ պնդում[3]։ Թ. Թորամանյանի հայտնած տեղեկությունը հետևյալն է. «Փլած են գմբեթները, սակայն ինչ որ այստեղ մեզի կարևոր է և ըստ ամենայնի հետաքրքրական, երկրորդական չորս գմբեթներու գոյության ապացույցն է, որոնց մեկուն երկու կարգ քարի բոլորակ շարքերը տակավին կմնան հարավ-արևմտյան անկյունին վրա։

Մասնավոր շնորհակալության արժանի է Գարեգին վարդապետ Հովսեփյանի մեկ հոդածությունը՝ այս անգնահատելի հիշատակարանի մասին, որ մանրամասն լուսանկարելով կորուստե ազատեց։ Մասնավորապես լուսանկարած է նաև հարավ-արևմտյան անկյունի փոքր գմբեթին մնացորդ քարերու բոլորակ շարքերն ալ»[4]։ Տ. Մարությանը, մեջբերելով այս քաղվածքը, գրում է. «Պարզվում է, որ Ավանի չորս անկյուններում, հիմքում բոլորաձև չորս սենյակների վերևում, շինության ծածկից վերև գոյություն են ունեցել ինչ-որ ծավալներ, որոնք փլվել են և նրանցից մեկի՝ հարավ-արևմտյան անկյան ծավալից մնացած երկու շարքը լուսանկարել է Գարեգին Հովսեփյանը։ Ցավոք, Թորամանյանի ուշադրությունը գրաված այն լուսանկարը, որ իր ժամանակին կատարել է Գարեգին Հովսեփյանը և որի վրա, համաձայն Թորամանյանի, երևվում էին տաճարի հարավ-արևմտյան անկյան փոքր գմբեթից պահպանված պատի երկու շարք, մինչև օրս չի հայտնաբերվում ո՛չ պետական հավաքածուներում, ոչ էլ առանձին անձանց մոտ»[5]։

Նախ, Թ. Թորամանյանի տեքստում շարքերի տեղադրման մասին խոսք չկա, չկա նաև ակնարկ ծածկի մասին։ Ոչ մի կռահում և մեկնաբանություն չի կարող պարզել, որ այդ շարքերը եղել են շինության ծածկից վեր և որ դրանք փոքր գմբեթի արտաքին շարքերն են։ Եվ ապա, չէ՞որ մեզ հասել է Գարեգին Հովսեփյանի՝ տաճարը հենց հարավ-արևմուտքից պատկերող լուսանկար։ Ընդ որում, հարավ-արևմտյան անկյունն իր բոլոր մանրամասներով այնքան պարզորոշ է երևում այդտեղ, որ ինչ լուսանկար էլ հայտնաբերվի, գմբեթածածկի բոլորակ շարքերից բացի, թմբուկի արտաքին պատի շարքեր չեն հայտնվի։

Անդրադառնալով Թ. Թորամանյանի տեքստին, Կ. Ղաֆադարյանը, որի կարծիքով Ավանն անտարակույս ունեցել է մի գմբեթ, նկատում է, որ «...այստեղ ինչ որ թյուրիմացություն կա...»[6]։

Իսկապես, ընդամենը երեք նախադասությունից բաղկացած փոքր հատվածի մեջ Թ. Թորամանյանը, ընդգծելով, որ իր համար կարևորն այս հուշարձանում չորս գմբեթների գոյության ապացույցն է, զարմանալիորեն երկու անգամ էլ մատնացույց է անում նույն՝ հարավ-արևմտյան անկյան գմբեթի նույն շարքերը։ Ընդ որում, տարօրինակ է, որ նույն բանը պատկերող մի ուրիշ լուսանկարի համար Թ. Թորամանյանն օգտագործում է «լուսանկարած է նաև» արտահայտությունը։ Մեջբերված քաղվածքի, տաճարը պատկերող լուսանկարների, ինչպես նաև կառույցի քննությունը թույլ են տալիս պնդելու, որ առկա է սոսկ մի վրիպակ։ Վրիպակ, որ շատ հաճախ է հանդիպում և՛ ձեռագիր, և՛ տպագիր տեքստերում։ Երրորդ նախադասության մեջ նշված «հարավ- արևմտյանի» փոխարեն պետք է լինի «հարավ-արևելյան»[7]։ Այս կերպ պարզ է

3 Նույն տեղում, էջ 10։

4 Թորոս Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 71։

5 Տիրան Մարությյան, նշվ. աշխ., էջ 12։

6 Կարո Ղաֆադարյան, Երևան, միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 74։

7 Թ. Թորամանյանը առաջին նախադասության մեջ նկատի ունի Գ. Հովսեփյանի՝ տաճարի տեսքը հարավ-արևմուտքից հայտնի լուսանկարը, ուր երևում են հարավ-արևմտյան գմբեթածածկի

դառնում, որ Թ. Թորամանյանի խոսքը վերաբերում է տաճարի հարավ-արևմտյան և հարավ-արևելյան անկյուններին։ Պարզ է դառնում նաև, որ Թ. Թորամանյանի ձեռքի տակ են եղել Գ. Հովսեփյանի այն երկու լուսանկարները, որոնք մեզ են հասել և լայնորեն հայտնի են[8]։ Իսկ այդ լուսանկարներում երևվում են միայն գմբեթածածկերի բոլորակ շարքերը։

Մեջբերված տեքստը, ինչպես նաև գմբեթներին վերաբերող մյուս դիտողությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ երբ Թ. Թորամանյանը գրում է, թե Ավանը հինգ գմբեթանի եկեղեցի է, ապա արձանագրում է միայն այն փաստը, որ տաճարում բացի հիմնական գմբեթից, գմբեթածածկեր են ունեցել նաև չորս անկյունային սենյակները։ Փաստ, որն անժխտելի է նաև այսօր՝ մեզ հասած հուշարձանի և լուսանկարների հիման վրա։

Ավանի գմբեթներին վերաբերող դիտողություններում Թ. Թորամանյանը ոչ մի խոսք կամ ակնարկ չունի դրանք արտաքին հորինվածքում արտահայտված լինելու մասին, որը կարելի լինի վիճարկել՝ համաձայնելու կամ ժխտելու համար։ Իսկ ինչ վերաբերում է ընդհանրապես հինգ գմբեթանի եկեղեցիների հետ հայ ճարտարապետության առնչությունների մասին հայտնած դիտողությանը, որը միայն, թերևս, կարող էր առիթ տալ ենթադրելու, թե Թ. Թորամանյանը տաճարը պատկերացրել է արտաքին հինգ գմբեթներով, ապա հավանականն այն է, որ նա միայն գմբեթածածկերի առկայության փաստը նկատի առնելով է Ավանը համեմատել ընդհանրապես հինգ գմբեթանի եկեղեցիների հետ, և այդ ոճը համարել «...6-րդ դարու հայ ճարտարապետության հատկանիշ...»[9]։ Եվ, վերջապես, պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ Թ. Թորամանյանը հատուկ չի ուսումնասիրել և չի անդրադարձել Ավանի քննությանը, չունի վերակազմության նախագիծ։ Գմբեթների մասին նրա խոսքն ըստ էության ընդհանուր հարցադրումների մեջ արված մի նկատում է լոկ՝ մեկ-երկու նախադասության սահմաններում և ոչ թե «աներկմիտ, կատարյալ համոզվածությամբ պնդում» և ոչ էլ մանավանդ՝ փաստի արձանագրում[10]։

Այսպիսով, տաճարը վերակազմելու համար փաստորեն հիմք կարող են ծառայել միայն հուշարձանի ավերակները և Գ. Հովսեփյանի ու Թ. Թորամանյանի թողած լուսանկարները։

ստորին աերկո։ կարդ քարի բոլորակ շարքերը» և այս փաստն արձանագրում է ըստ լուսանկարի։ Այնուհետև։ Նա շնորհակալություն է հայտնում Գ. Հովսեփյանին՝ այս անգնահատելի հիշատակարանը կորստից փրկելու համար, քանի որ գմբեթածածկի այդ շարքերը (և ուրիշ այլ մանրամասներ) հիրավի գոյություն չունեին, երբ Թ. Թորամանյանը գրում էր այս տողերը։ Իսկ երրորդ նախադասության մեջ նա հիշատակում է Գ. Հովսեփյանի նույնպես շատ հայտնի հարավ-արևելյան գմբեթածածկի լուսանկարը։ Լուսանկար, որն արված է «մասնավորապես» և որում երևացող հինգ շարքն անվանված է «բոլորակ շարքերն ալ»։ Այս ձևով որոշակի է դառնում անհասկանալի թվացող «լուսանկարած է նաև» արտահայտությունը։ Մատնանշելով (ըստ լուսանկարի) գմբեթածածկի առկայության փաստն արևմտակողմում, Թ. Թորամանյանը հիշատակում է դրանց առկայությունը նաև արևելակողմում, իբրև իրեն հետաքրքրող խնդրի՝ չորս գմբեթածածկերի գոյության մյուս ապացույց։ Ապացույց, որ նա տեսած պիտի լիներ անկախ լուսանկարից, քանի որ այդ դրվագը պահպանված է մինչև օրս։

8 Այդ լուսանկարները կան նաև Տ. Մարությանի գրքում (նշվ. աշխ., նկ. 1, 12)։

9 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 71։

10 Կարծում ենք, որ այս պարագայում հարկ չկար գրելու, թե «Ավանի համար վերակազմության նախագիծ Թորամանյանը չի առաջարկել, սակայն առկա ավերակի նյութերի ընդհանուր տվյալներով մտապատկերել և որոշակիորեն տեսել է երբեմնի կանգուն տաճարի ընդհանուր լուսավորչանդ հորինվածքը, հինգ գմբեթներով» և առավել ևս գրելու թե՝ «...համաձայն նոր վերակազմության Ավանի երբեմնի կանգուն եկեղեցին եղել է ...այնպես, ինչպես տասնամյակներ առաջ պատկերացնում էր մեծ գիտնական Թորոս Թորամանյանը» (Տիրան Մարության, նշվ. աշխ., էջ 18, 17—18)։ Մանավանդ որ անորոշ է մնում, թե հեղինակի ներկայացրած երկու տարբերակներից, այնուամենայնիվ, որն է Թ. Թորամանյանի «մտապատկերածը և որոշակիորեն տեսածը»։

Ավանը մեզ հասած նույնատիպ հուշարձանների մեջ հնագույնն է, սակայն այդ բնավ էլ չի նշանակում, թե տաճարն այս տիպի հենց առաջին օրինակն է։ Եթե այն ընդունենք անգամ իբրև առաջին օրինակ, ապա միևնույն է ոչ մի հիմք չունենք պնդելու, որ տաճարը կարող էր ձևակերտված չլինել տիպին բնորոշ դոնե հիմնական հատկանիշներով։ Հայկական ճարտարապետության մեջ շատ որոշակի նկատվում է, որ նույնատիպ հուշարձանների (և ընդհանրապես գմբեթավոր հուշարձանների) ճարտարապետական ու կառուցողական հիմնական սկզբունքներն ու լուծումները կայուն են։ Ընդ որում, կայուն են ոչ միայն մեկ ժամանակահատվածի մեջ, այլև նույնիսկ վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար։ Այս առումով, եթե նախապես պետք է ընդունել որևէ ելակետ, ապա Ավանի տաճարի վերակազմության համար ելակետային պիտի լինեն նույնատիպ հուշարձանները, եթե, իհարկե, տաճարի պահպանված մանրամասերը չեն հակասում դրան։ Իսկ այլ ելակետ ընդունելու, տաճարն այլ կերպ պատկերացնելու և վերակազմելու համար անհրաժեշտ է ունենալ միայն ու միայն անհերքելի փաստական ապացույց և ոչ թե հենվել հավանական թվացող կռահումների ու ենթադրությունների վրա: *Ուստի, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե սկզբից ևեթ հիմք ընդունենք, որ Ավանի տաճարն իր ծավալատարածական հիմնական լուծմամբ պետք է նման լինի ավանատիպ տաճարներին (տախտ. 1—7)*[11]։

Տաճարի վերակազմության համար անհրաժեշտ է պարզել տանիքների ձևը, ճակատների բարձրության չափը, գմբեթատակ հիմքի, գմբեթի. գմբեթածածկերի ձևն ու չափերը։

ՏԱՆԻՔՆԵՐԻ ՁԵՎԸ—Ավանատիպ բոլոր հուշարձաններում անկյունային սենյակների տանիքները ցածր են և միաթեք, իսկ խաչաթևերի կամ հիմնական ծավալի տանիքները բարձր են և երկթեք։ Այսինքն, հորինվածքի խաչաձևությունն արտահայտվում է նաև ծածկաձևում։ Եթե ավելացնենք նաև, որ Հայաստանի վաղ միջնադարի գմբեթավոր հուշարձաններն էլ գերազանցապես խաչաձև ծածկ ունեն, ապա Ավանի համար այլ ծածկաձև ընդունելու ոչ մի հիմք չունենք։ Այս առումով Ռ. Աղաբաբյանի վերակազմության մեջ առաջադրված տանիքների ձևը, ուր արևելյան և արևմտյան ճակատներն ամբողջ լայնքով առնված են երկլանջ տանիքի տակ, անընդունելի է։ Տ. Մարությանի նախագծում արված տանիքների ձևը, որն ուղղակի իրականացումն է Ն. Տոկարսկու այն ենթադրության, թե դատելով արևմտյան ճակատի միջնամասի հորիզոնական գոտու մնացորդներից, այստեղ խաչաձև վերնամասի դեպքում կարող էր լինել ոչ թե щипец[12], *այլ ճակտոն»*[13], *ինքնին ճիշտ է։ Սակայն այստեղ սխալը նրանց տեղի, այսինքն՝ ճակատների բարձրության չափի ընտրությունն է։*

ՃԱԿԱՏՆԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ—Ավանի տաճարի արևմտյան ճակատում պահպանված հորիզոնական գոտու հատվածը ուսումնասիրողներն ընդունել են իբրև երկթեք տանիքի ճակտոնի հորիզոնական քիվի մնացորդ։ Այն այդպես են ընկալել նաև վերակազմության երկու նախագծերի հեղինակները։

---

[11] *Ավանատիպ տաճարներից համեմատաբար բարվոք վիճակում մեզ են հասել միայն չորս հուշարձան. Թարգմանչացը (վերակազմություն Տ. Մարությանի). Սիսիանը (վերակազմություն Ա. Միրիջանյանի), Գառնահովիտը (վերակազմություն հեղինակի, չափագրություն Բ. Արզումանյանի և Ս. Ներսիսյանի) և Հռիփսիմեն (վերակազմություն հեղինակի, չափագրություն Լ. Սադոյանի և Ա. Երեմյանի)։ Ավանի տաճարի չափագրությունները կատարել ենք ճարտարապետ Հ. Թելումյանի հետ։ Հատակագծի չափագրությունը վերցրել ենք Պատմության ու կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության արխիվից։*

[12] *Ճակատային պատի անկյունային վերնամաս՝ պարփակված երկլանջ տանիքով, որն ի տարբերություն ճակտոնի, չունի հորիզոնական քիվ։*

[13] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 121—122. *Այս կարծիքին է նաև Ա. Յակոբսոնը* (А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950, с. 21):

«Հենց այս քիվը մեզ համար դարձավ բանալի շինության արտաքին ծավալատարածական հորինվածքի վերականգնման համար»,— գրել է Ռ. Աղաբաբյանը[14]։ «Վերակազմության նախագծում ճակատների բարձրությունը որոշվում է ճշտորեն—առանց դժվարության, քանի որ արևմտյան ճակատի վրա առ այսօր իր տեղում պահպանվում է ճակտոնի հորիզոնական գոտու դրվագը՝ երեք երկար քարեր»,— նշել է Տ. Մարությանը[15]։

Տախ. 1. Ավանի տաճարի վերակազմություններ և ավանատիպ տաճարներ 1.—ըստ Ռ. Աղաբաբյանի, 2. —ըստ Տ. Մարությանի, 3.—ըստ հեղինակի 4. Թարգմանչաց, 5. Սիսիան, 6. Գառնահովիտ, 7. Հռիփսիմե

Հիրավի, հուշարձանի արևմտյան ճակատի վերին մասում պահպանված այս մանրամասը այն միակ փաստական նյութն է, այն բանալին, որով հնարավոր է լուծել առաջադրված խնդիրը։ Սակայն բանն այն է, որ և՛ ուսումնասիրողների, և՛ վերակազմության նախագծերի հեղինակների կողմից անվիճելիորեն ճակտոնին վերագրվող հենց այս մանրամասն է սխալ ընկալվել։ Սխալ, որը և հանգեցրել է տաճարի ծավալատարածական ոչ ճիշտ պատկերացմանն ու վերստեղծմանը և դրանից բխող տեսական ենթադրություն-եզրահանգումների։

Արևմտյան ճակատում պահպանված այդ երեք տրամատված քարերը, մեր կարծիքով, ոչ թե ճակտոնի հորիզոնական քիվի քարերն են, այլ միաթեք տանիքների քիվերի մակարդակի վրա, ճակատի կենտրոնական մասի լայնքով ձգված գոտու քարերը։ Դրանում համոզվելու համար՝ պահպանված գոտու և տանիքների տեղադրման հետ կապված, հարկ է քննել ճակատների լուծման հնարավոր տարբերակները, որոնք մեր կարծիքով հիմնականում չորսն են, և պարզել, թե դրանցից որն է առավել հավանականն Ավանի տաճարի համար։

Առաջին. ճակատի ամբողջ լայնքով ձգվող երկթեք տանիքի դեպքում գոտին կարող էր լինել ճակտոնի հորիզոնական քիվը (տախտ., 1)։ Սակայն այս տարբերակը, որն իրականացված է վերակազմության առաջին նախագծում,

---

14 Р. Я. Агабабян, Реконструкция Авана (Предварительное сообщение), «Сборник трудов ЕрПИ им. К. Маркса», № 3, 1948, с. 286—287.

15 Տիրան Մարությանը, նշվ. աշխ., էջ 16։

անընդունելի է, թեկուզ միայն այն պատճառով, որ այս կերպ լուծված արևելյան և արևմտյան ճակատների հետ մեկտեղ, հուշարձանի հարավային և հյուսիսային ճակատները լուծված են խաչաձև հորինվածքին բնորոշ տանիքների օրինակով։ Հայ ճարտարապետության մեջ դեռևս հայտնի չէ որևէ հուշարձան, որի ճակատները սկզբունքորեն տարբեր լուծումներ ունենան։ Մի կողմ թողնելով այն, որ քիվի ճակատով մեկ ձգված լինելը առանց փաստական հիմքի ենթադրություն է, նկատենք, որ այս տարբերակում հուշարձանը ստացվում է գետնամած և, ամենակարևորը, ի ցույց է դնում ներքին և արտաքին լուծումների սկզբունքային անհամապատասխանություն, որը խորթ է հայկական հուշարձաններին։ Այս առումով բացառվում են նաև քննվող տարբերակի մյուս՝ ընդհանուր քառալանջ տանիքով[16], կամ չորս երկլանջ տանիքներով[17], տարատեսակները։

Երկրորդ. խաչաձև ծածկի դեպքում, եթե անկյունային սենյակների տանիքները տեղադրված լինեին պահպանված գոտու մակարդակից ցած, գոտին կարող էր դառնալ արդեն խաչաթևի ճակատների հորիզոնական քիվ (տախտ., 2)։ Սակայն այս տարբերակը ևս, որն իրականացված է վերակազմության երկրորդ նախագծում, անընդունելի է, քանի որ հուշարձանի պահպանված մասերն ինքնին բացառում են նման լուծման հնարավորությունը։ Հյուսիսային ճակատի արևելյան մասում մինչև օրս էլ պահպանված վերին երկու շարքերի արևելակողմ շարունակությունն է կազմում մեկ մետր երկարությամբ պատի միջուկի կրաբետոնե մի հատված։ Այն ամբողջությամբ ընկնում է գմբեթատակ հիմքից արևելք՝ ենթադրվող տանիքի տեղում (գծ. 4)։ Նշանակում է միաթեք տանիքները պահպանված գոտուց ցած հնարավոր չէ տեղադրել, քանի որ պատի միջուկի այդ հատվածն ավելի քան բավարար ապացույց է այն բանի, որ պատն այստեղ շարունակվել է։

Երրորդ. խաչաձև ծածկի դեպքում անկյունային սենյակների միաթեք տանիքները կարող էին դրվել հենց պահպանված գոտու մակարդակի վրա (տախտ., 3)։ Ուշագրավ է, որ ի տարբերություն վերը նշված տարբերակների, այսպիսի լուծման օրինակների հանդիպում ենք վաղ միջնադարի հայկական հուշարձաններում և հենց ավանատիպ տաճարներում։ Հռիփսիմեի տաճարի արևելյան ճակատում կա այդպիսի մի գոտի, որը ձգվում է ճակատի կենտրոնական մասի լայնքով, իր տեղադրումով համապատասխանելով միաթեք տանիքների քիվերի մակարդակին[18]։ Նույն լուծումը կիրառված է նաև Սիսիանի տաճարի արևմտյան ճակատում, թեև այստեղ գոտին երիզում է որմնախորշերի վերնամասերը ևս (տախտ., 5, 7)։ Այս փաստերը թույլ են տալիս եզրակացնելու, որ Ավանի

---

16 Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 122։

17 А. Х. Тораманян, Заметки об архитектуре храма в Аване («Научные сообщения ІМИНВ», вып. X, М., 1978, с. 122). Ուշագրավ է Ա. Թորամանյանի այն ենթադրությունը, որ Ավանի գմբեթը կարող էր ունենալ Հռիփսիմեի տաճարի գմբեթին կից դեկորատիվ փոքր աշտարակներից։ Մեր ուսումնասիրության համաձայն Հռիփսիմեի աշտարակները ոչ թե դեկորատիվ են կամ սիմվոլիկ, այլ ֆունկցիոնալ նշանակություն են ունեցել։ Հուշարձանի ներսում՝ արևմտյան խաչի վերնամասի երկու կողմերում մինչև օրս առկա են անկյունային սենյակների երկրորդ հարկերը տանող բացվածքներ՝ մուտքեր։ Պահպանվել են որոշ հետքեր, որոնք թույլ են տալիս կարծելու, որ այդ բացվածքները կապված են եղել աշտարակների հետ, և այդ աշտարակները ծառայել են իբրև ելք՝ դեպի գմբեթի պատշգամբ։ Իսկ արևելակողմի աշտարակներով կապ է ստեղծվել այդ կողմի անկյունային սենյակների երկրորդ հարկերի հետ։ Ու թեև վերակազմության մեր նախագծում գմբեթը Հռիփսիմեի գմբեթի օրինակով է տեղադրված և Ավանում նույնպես պատշգամբ է ստացվում, սակայն անգամ այս դեպքում աշտարակների գոյությունը մնում է սոսկ իբրև ուշագրավ ենթադրություն։

18 Ալ. Երեմյանի կարծիքով Հռիփսիմեի տաճարի արևելյան խորանը VII դ. վերակառուցվել է, և այդ ժամանակ է հավելվել ճակատի գոտին (А. Б. Еремян, Храм Рипсимэ, Ереван, 1955, с. 41)։ Եթե ընդունենք անգամ, որ արևելյան խորանը վերակառուցված է, ապա դա բնավ չի բացառում գոտու սկզբնական լինելու հանգամանքը։

տաճարի արևմտյան ճակատը ճակատոնային լուծում չի ունեցել, և պահպանված քարերը ոչ թե ճակատոնի հորիզոնական քիվի մնացորդներն են, ինչպես ընդունված է մինչև այժմ, այլ Հռիփսիմեի և Սիսիանի տաճարների օրինակով պատկանել են այն գոտուն, որը ձգվել է ճակատի կենտրոնական մասում միաթեք տանիքների քիվերի մակարդակի վրա[19]։ Հռիփսիմեի և Սիսիանի հուշարձաններում, եթե մի պահ մտովի հանենք այդ գոտին, ապա կնկատենք, որ տանիքների մակարդակը հայտնի է դառնում նաև որմնախորշերի ավարտով։ Այդպես է վաղ միջնադարի հայ ճարտարապետության մի շարք այն հուշարձաններում, ուր չկա այդպիսի գոտի. հորիզոնական նույն շարքով ավարտվում են հիմնական ծավալի պատերն ու որմնախորշերը և ապա դրվում միաթեք տանիքներն ու որմնախորշերի վերնամասերը։

Ավանատիպ հուշարձաններից Գառնահովիտում, ինչպես և այլուստիպ որոշ կառույցներում (հիմնականում ուշ շրջանի), միաթեք տանիքները դրված են նշված մակարդակից բավական վեր (տախտ., 6)։ Սա էլ հենց շորրորդ տարբերակն է, որը սակայն քիչ հավանական է Ավանի համար, քանի որ տանիքները վեր տեղադրելիս երկթեք ծածկի գագաթը բարձրանում է և, ամենակարևորը, հորիզոնական գոտին ճակատի վրա անորոշ և պատահական տեղադրում է ստանում։ Իսկ ինչպես նկատեցինք, գոտու առկայության դեպքում միաթեք տանիքները դրվում են նրա մակարդակի վրա։

Հորիզոնական գոտու և միաթեք տանիքների տեղադրման փոխպայմանավորվածության առումով չափազանց ուշագրավ է Արուճի տաճարը։ Այստեղ, քանի որ գոտին հանգչում է որմնախորշերի շրջանաձև մասի հիմքից մի շարք վեր, միաթեք տանիքներն էլ են տեղադրված մի շարք վեր, այսինքն՝ գոտին և տանիքները պահվել են միևնույն մակարդակի վրա։

Ուրեմն, պետք է ճշմարիտ համարել երրորդ տարբերակը, այսինքն, այն, որ Ավանի տաճարի արևմտյան ճակատում միաշեղ օրս պահպանված երեք քարերը պատկանել են ճակատի կենտրոնական մասի լայնքով ձգված գոտուն, և միաթեք տանիքներն էլ տեղադրվել են այդ գոտու մակարդակի վրա։ Սրա ճամաձայն է ճակատների բարձրության չափը որոշակի է՝ ըստ պահպանված գոտու մնացորդ քարերի (գծ. 1)։

ԳՄԲԵԹԱՏԱԿ ՀԻՄՔ—Մինչև 1940-ական թվականներն արված լուսանկարներում տաճարի գմբեթատակ կամարների վերին մակարդակում կամ, ավելի ճիշտ, հենց գմբեթատակ հիմքի տեղում երևում է 3—4 շարք բարձրությամբ պատի մի հատված։ Գ. Զուբինաշվիլին, որն ի մոտո տեսել էր հուշարձանը, այն համարել է թմբուկի ստորին մասը և գրել. «Դեռևս 1924 թվականին գմբեթի թմբուկը արտաքինից պահպանել էր երեսպատման մինչև 3—4 շարք, որոնք պարզորոշ գծագրում էին նրա ձևը»[20]։ Տ. Մարությանի կարծիքով պատի այդ հատվածը գմբեթատակ ստարածության արտաքին արտահայտությունը հանդիսացող կենտրոնական խորանարդաձև ծավալի մի մասն է, որի չորս անկյունները ինչ որ չափով կտրված են[21]։

Նշված հատվածը թմբուկի մասը չէր կարող լինել թեկուզ այն պարզ պատճառով, որ այդ մակարդակում պետք է գտնվեր հուշարձանի գմբեթատակ հիմքի ծավալը, առանց որի Ավանը հնարավոր չէ պատկերացնել։ Հայկական բոլոր գմբեթավոր հուշարձանները, այդ թվում և ավանատիպ տաճարները, որոնք խաչվող երկթեք տանիքներով են լուծված, իբրև կանոն ունեն նաև գմ-

---

19 Ավանի և Հռիփսիմեի տաճարներում պահպանված գոտիների նույնությունը նշել է նաև Գ. Զուբինաշվիլին (Г. Н. Чубинашвили, Памятники типа Джвари, Тбилиси, 1948, с. 113)։

20 Г. Н. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, 3. Ստրժիգովսկին նույնպես, առանց նշելու պատի այդ հատվածի ձևը, այն համարել է թմբուկի մնացորդ. J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, Bd. 1, p. 89)։

21 Տիրան Մարության, նշվ. աշխ., էջ 33։

բեթատակ հիմք։ Այն դեպքում միայն, երբ հիմնական ծավալի և թմբուկի ուրվագծերը համանման են, դմբեթատակ հիմք՝ իբրև ուղղանկյուն ծավալ, արդեն գոյություն չունի։ Ուստի, Ավանի տաճարը գմբեթատակ հիմք չէր ունենա միայն այն դեպքում, եթե թմբուկն արտաքինից ուղղանկյուն լիներ, մի բան որ մեր կարծիքով անհավանական է։

Գմբեթ դնելիս՝ անկախ այն բանից թմբուկը բազմանիստ է, թե բոլորակ, խաչվող երկթեք տանիքների հատումից առաջացած, հատակագծում ուղղանկյուն տարածության անկյունները բաց են մնում։ Գմբեթատակ հիմքի խորանարդաձև ծավալը փակում է բաց մնացող այդ անկյունային մասերը՝ դրանց ծածկերն առնելով իր վրա։

Հայկական, հատկապես վաղ միջնադարի հուշարձանների մեծ մասում, այդ թվում նաև ավանատիպ տաճարներում, գմբեթատակ հիմքի ծավալը հանդես է գալիս իբրև կառույցի արտաքին ծավալատարածական հորինվածքի կարևոր, ընդգծված մանրամաս։ Կան նաև հուշարձաններ (հիմնականում ուշ շրջանի), որոնցում գմբեթատակ հիմքը, իբրև խորանարդաձև ծավալ, կա՛մ նվազ չափով է արտահայտվում, կա՛մ նույնիսկ չի արտահայտվում։ Սակայն այս դեպքում էլ հիմքի բաց մնացած մասերում փոքր պատահատվածներ՝ փաստորեն գմբեթատակ հիմքի ծավալի լոկ անկյունային մասերն են տեղադրվում, և ծածկերը դրվում են դրանց վրա։ Ուրեմն, գմբեթատակ հիմքի ուղղանկյուն ծավալի գոյությունը Ավանի տաճարում անվիճելի է։ Նշված հանգամանքը թույլ է տալիս անհավանական համարելու նաև այն կարծիքը, թե լուսանկարում երևացող պատահատվածը տաճարի գմբեթատակ հիմքն է, որի անկյուններն ինչ-որ չափով կտրված են։ Քանի որ այս դեպքում անկյունային մասերը նորից բաց են մնում, և պարզապես ստացվում է Գ. Զուբինաշվիլու ստեղծագործած տարբերակը։ Տ. Մարությանը իրավացիորեն նշելով, որ սովորաբար գմբեթատակ հիմքի խորանարդաձև ծավալը իր ընդհանուր հորինվածքը չի փոխում նաև Ավանի, Հռիփսիմեի և այլ տիպի տաճարներում, և նրա չորս անկյուններն ունենում են ինքնուրույն ծածկեր, դեռ ավելին, ընդգծելով, որ «Ավանը, որ բացառություն չի կազմում, իր վերնամասում ունեցել է ճիշտ այդպիսի պատկեր», անսպասելիորեն մատնանշում է՝ «լոկ մի տարբերությամբ, այդ այն է, որ այստեղ կենտրոնական խորանարդաձև ծավալի չորս անկյունները ինչ որ չափով կտրված են»[22]։ Ուրեմն, գմբեթատակ հիմքը լոկ մի նպատակ ունի՝ ծածկել հիմքի բաց մնացող անկյունային մասերը, սակայն ստացվում է, որ Ավանի համար առաջարկվող գմբեթատակ հիմքը լոկ այն տարբերությունն ունի, որ չի ծածկում այդ բաց մնացող անկյունները[23]։ Հա-



Գծ. 1. Ավան, արևմտյան ճակատ

22 Նույն տեղում։

23 Տ. Մարությանի վերակազմության մեջ Ավանի ակսոնոմետրիկ տեսքը պատկերող գծագրից պարզ երևում է, որ տաճարի գմբեթատակ հիմքը պիտի ուղղանկյուն լիներ, և այս դեպքում արդեն հարկ չէր լինի գմբեթատակ հիմքի անկյուններում երկթեք տանիքների ծածկերի և փոքր գմբեթների ծածկերի վրա ջրահեռացման համար հավելյալ ծածկեր ևս դնել։ Ծածկեր, որ այնքան տարօրինակ են ու ավելորդ, որ հեղինակը նույնիսկ խուսափել է դրանք ցույց տալ ճակատները պատկերող բոլոր գծագրերում։

յաստանի վաղ միջնադարի ճարտարապետության մեջ դեռ հայտնի չէ որևէ հուշարձան, ուր գմբեթատակ հիմքի ծածկերը դրված լինեն տանիքների ծածկերի վրա։

Մեր կարծիքով լուսանկարում պատկերված այդ 3—4 շարք պատի հատվածը հուշարձանի սկզբնական կառույցի հետ առնչություն չունի և վերակառուցման արդյունք է։ Իբրև ապացույց մեջ բերենք հենց Տ. Մարությանի նկարագրությունը. «Մանրամասներում խորանալով, նկատում ենք, որ հիշյալ 3—4 շարք ունեցող պատահատվածի քարերը, ի հակադրություն տաճարի ճակատների քարերի, բարձրությամբ համեմատաբար փոքր են ու մի քիչ էլ վատ են մշակված, նրանց հորիզոնական և ուղղաձիգ կարերը որոշ չափով անկանոն են, բարձրության չափերը միմյանցից մի քիչ տարբեր»[24] (ընդգծումները մերն են— Վ. Գ.)։ Ընդամենը 3—4 շարք պատի հատվածի մեջ, կարծում ենք, որ այս «մի քիչները» այնքան շատ են և էական, որ եթե անտեսենք անգամ այն փաստը, որ շարքերը շեղված էին և նիստերն էլ հստակ չէին՝ ըստ Գ. Զուբինաշվիլու վկայության[25], ապա այսքանը լիովին բավարար է պատի այդ հատվածն անտարակույս համարելու վերակառուցված։ Եվ հարկ չկա այդ անկանոնությունները բացատրելու մի ենթադրությամբ, թե «այդ պատահատվածը տաճարի որոշ մասերով ծածկված է եղել և մոտ տարածությունից չի դիտվել, իսկ որոշ հեռավորությունից այդ փոքր անկանոնությունները չեն նկատվել»[26]։ Հայաստանի վաղ միջնադարի հուշարձաններից դեռևս հայտնի չէ որևէ օրինակ, ուր «որոշ հեռավորությունից աննկատ մնացող» մասերի շարվածքը ճակատների շարվածքի համեմատ ունենա «փոքր անկանոնություններ»։ Մեր հուշարձաններում թաքստոցներն անգամ շարված են սրբատաշ քարերից, կանոնավոր շարքերով։ Ուրեմն, եզրակացությունը միակն է՝ Ավանի գմբեթը գմբեթատակ հիմքի հետ միասին կործանված է եղել։ Հետագայում հուշարձանը վերակառուցվել է, ինչ որ ձևով (թերևս գմբեթով) ծածկվել, և լուսանկարում երևացող պատի հատվածը այդ վերակառուցված գմբեթի մնացորդն է։

Ավանի տաճարը, մեր համոզմամբ, ունեցել է հայ ճարտարապետության մեջ իբրև կանոն օգտագործված խորանարդաձև ծավալի գմբեթատակ հիմք[27]։ Վերջինիս չափերը համընկնում են գմբեթաթմբուկի առանցքային չափերի հետ, իսկ ինչ վերաբերում է բարձրությանը, ապա և՛ ավանատիպ տաճարներում, և՛ հայ ճարտարապետության այլատիպ հուշարձաններում, այն սովորաբար համապատասխանում է առագաստները երիզող գոտու մակարդակին։ Բարեբախտաբար մեզ են հասել տաճարի նաև ներքին տեսքը պատկերող 1920-ականներին արված լուսանկարներ։ Սրանք, ինչպես նաև այժմ քանդված այդ դրվագի ընկած քարերը, հնարավորություն են ընձեռում հավանական ճշտությամբ վերակազմելու տաճարի գմբեթատակ հիմքից դեպի գմբեթաթմբուկ փոխանցման համակարգը։ Սա ինքնին մղում է մի եզրահանգման, ըստ որի կամարներով և առագաստներով ստեղծված փոխանցման համակարգը երիզված է եղել գոտիով, և գմբեթաթմբուկը հիմքում եղել է շրջանաձև (գծ. 3)։ Մի բան, որն արված է Տ. Մարությանի նախագծում, ուր ուղղվել է վերակազմության առաջին նախագծում թույլ տրված բացահայտ սխալը՝ փոխանցման տրոմպային համակարգը[28]։ Այստեղ հարկ է շեշտել, որ փոխանցման համակարգը երիզող գոտին անտարակույս գոյություն է ունեցել, քանի

---

24 Նույն տեղում, էջ 35։

25 Г. Н. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, с. 15.

26 Տիրան Մարության, նշվ. աշխ., էջ 35։

27 Ռ. Աղաբաբյանը թեպետ չի անդրադառնում այդ 3—4 շարք պատահատվածի՝ տաճարին պատկանելու կամ չպատկանելու հարցին, սակայն իր նախագծում իրավացիորեն առաջարկում է խորանարդաձև ծավալի գմբեթատակ հիմք։

28 Ավանի տաճարում առագաստներով և կամարներով իրականացված փոխանցման համակարգի գոյությունը նշել է դեռևս Ց. Ստրժիգովսկին (նշվ. աշխ., էջ 89)։ Իսկ Ռ. Աղաբաբյանի նախագծում թույլ տրված սխալն առաջինը մատնանշել է Ալ. Երեմյանը, նշելով նաև, որ թմբուկը գլանաձև պիտի եղած լիներ (նշվ. աշխ., էջ 93)։

որ առագաստային փոխանցում ունեցող հայկական բոլոր հուշարձաններում այն իբրև կանոն առանց բացառության կիրառված է։ Անտարակույս այստեղ դոտին նույն դերն ունի, ինչ արտաքին ծավալները երիղող քիվերը։

Ավանի գմբեթաթմբուկի հիմքը շրջանաձև է եղել։ Դրա ապացույցն են վաղ միջնադարի հայկական բոլոր այն հուշարձանները, որոնք առագաստային փոխանցում ունեն։ Հակառակ փաստ մեզ հայտնի չէ։ Իսկ գմբեթը, մեր կարծիքով, դրված է եղել խորանների և 3/4 խորշերի կամարների վրա, և նրա ծանրությունը կրել են ոչ թե առագաստները, այլ կամարները[29]։ Ինչ վերաբերում է փոխանցման գոտու վերնամասին, ապա թմբուկի նման տեղադրման դեպքում այն ոչ թե շրջանաձև պիտի լիներ, այլ արևելյան և արևմտյան կողմերում փոքր-ինչ սեղմված, այսինքն՝ ճիշտ այնպես, ինչպես Հռիփսիմեի տաճարում է (գծ. 2)։

Գմբեթաթմբուկի պատի հաստության չափը ընդունելով մեկ մետր (թմբուկների միջին չափը) կստանանք գմբեթաթմբուկի, նույնն է՝ թե գմբեթատակ հիմքի արտաքին առանցքային չափերը, ուրեմն և խաչաթևերի լայնության, ինչպես նաև ճակատի կենտրոնական մասում ձգվող գոտու երկարության չափը[30]։

ԳՄԲԵԹԱԾԱԾԿԵՐ—Ավանի տաճարի անկյունային չորս սենյակները, ինչպես արդեն նկատել ենք, ավարտվում են գմբեթածածկերով։ Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, որ Ավանը հինգ գմբեթ չէր կարող ունենալ, քանի որ գմբեթածածկերը՝ ցած լինելու պատճառով, չէին կարող արտահայտվել արտաքին հորինվածքում։ Ի հակադրություն այս կարծիքի, Տ. Մարությանը իբրև հիմնական և փաստական ապացույց բերում է հարավ-արևելյան գմբեթածածկի իր չափագրությունն ու վերակազմությունը և եզրակացնում, թե «...ծածկի գագաթը մոտ մեկ մետր ավելի բարձր է, քան եթե ծածկված լիներ միակենտրոն կիսաշրջագծի կողդեմով։ Այսպիսով պարզվում է, որ անկյունային սենյակների ծածկերը զգալի բարձրություն են ունեցել և ոչ մի կերպ չէին կարող ծածկված մնալ տաճարի ընդհանուր սանիքի տակ»[31]։ Սակայն հարկ է նկատել, որ Տ. Մարությանի ներկայացրած գմբեթա-

---

29 Վերակազմության երկրորդ նախագծում գմբեթի ամբողջ ծանրությունը ընկած է առագաստների վրա։

30 Ալ. Երեմյանը, Հռիփսիմեի տաճարի խաչաթևերի տանիքների վերնամասում թաղերի մնացորդների փաստը նկատի առնելով, իր ուսումնասիրության մեջ հանգել է այն եզրակացության, որ արևելյան խաչաթևը (ինչպես և մյուս խաչաթևերը) ի սկզբանե ձգված է եղել գմբեթատակ հիմքի լայնքի չափով, իսկ այժմյան նեղ խաչաթևը վերակառուցման արդյունք է։ Փաստի հիման վրա արված եզրակացությունն այնքան տրամաբանական է և կուռ, որ մեր կարծիքով այն առայժմ կարող է հերքել թերևս միայն տաճարի կառուցողը (նշվ. աշխ., էջ 44—45)։ Արևմտյան ճակատի գոտին այժմ ձգվում է վերակառուցված խաչաթևի լայնքով մեկ։ Սակայն տաճարի հարավ-արևելյան տեսքը պատկերող լուսանկարում, որն արված է մինչև 1898 թ. վերակառուցումը, գոտին խաչաթևից երկար է և ձգվում է գմբեթատակ հիմքի չափով։ Դժվար չէ կռահել, որ գոտին ձգված է եղել սկզբնական խաչաթևի լայնքով, և 1898 թ. վերակառուցման ժամանակ այն կարճացրել են, հարմարեցրել վերակառուցված խաչաթևի չափին։ Այսուհանդերձ, վերջերս Հռիփսիմեի տաճարի արևելյան ճակատի վերակազմության մի նոր գծագիր է հրատարակվել, ուր արևելյան խաչաթևը պատկերված է ոչ թե սկզբնական, այլ վերակառուցված տեսքով, իսկ գոտին էլ ձգվում է ոչ թե գմբեթատակ հիմքի, այլ ճակատի լայնքով մեկ։ (С. А. Манлов. К проблеме формы в раннесредневековом зодчестве Армении. К проблеме формообразования в архитектуре народов СССР («Сборник научных трудов. Центральный научно-исследовательский и проектный институт по градостроительству (ЦНИИП градостроительства) госгражданстроя») М., 1982, с. 21)։ Մեր կարծիքով վերակազմությունն անելիս հարկ է հուշարձանը հետազոտել տեղում, իսկ եթե այն հեռու է գտնվում, ապա հարկ է ուսումնասիրել հուշարձանին վերաբերող նյութերը՝ լուսանկարներ, չափագրություններ։ Այս սխալը թերևս չլիներ, եթե հեղինակը գոնե ուշադիր կարդար տաճարին նվիրված միակ՝ Ալ. Երեմյանի ուսումնասիրությունը։

31 Տիրան Մարության, նշվ. աշխ., էջ 17։

ծածկի չափագրությունը սխալ է, իսկ վերակազմությունը՝ անհամոզիչ։ Դրանում համոզվելու համար բավարար է գմբեթածածկի նրա չափագրությունը համեմատել իր իսկ նկարագրության հետ, որն ի դեպ համապատասխանում է իսկությանը։ Տ. Մարությանը գրում է. «Ինչպես տեղում, այնպես էլ լուսանկարում հստակորեն ուրվագծվում է ծածկի կորվածքի շատ բնորոշ կողաձևը։ Այստեղ ծածկի գնդաձևությունը սկսվում է ոչ թե անմիջապես ծածկի հիմքով անցնող գոտու վրայից, այլ զգալի՝ մոտ մեկուկես քարի շարք բարձրից։ Գմբեթածածկի առաջին շարքը բարձրանում է ուղղաձիգ»[32]։ Սա միանգամայն ճիշտ է, սակայն ներկայացված չափագրության մեջ ծածկի գնդաձևությունը սկսվում է անմիջապես ծածկի հիմքով անցնող գոտու վրայից։ Այնուհետև հեղինակը շարունակում է. «...երկրորդ շարքի ցածրի կեսը թեքվում է դեպի դուրս, բարձրի կեսը՝ ներս։ Հենց այստեղից էլ սկսվում է ծածկի կորագիծը»[33]։ Նույնպես շատ ճիշտ է նկատված, սակայն այս դեպքում, ուրեմն, շրջագծի կենտրոնները չէին կարող տեղադրված լինել հիմքից 0,4 մ վեր, ինչպես արված է նախագծում, քանի որ առաջին ուղղաձիգ շարքի բարձրությունն արդեն 0,5 մ է։ Ուրեմն, կենտրոնները պետք է գտնվեին երկրորդ շարքի միջնամասի մակարդակում, այնտեղ, ուր «ցածրի կեսը թեքվում է դուրս, իսկ բարձրի կեսը՝ ներս»։ Ուստի ներկայացված չափագրությունը (շառավիղները՝ 1—300 սմ, և կենտրոնները հիմքից 0,4 մ բարձրությամբ) սխալ է։ Սակայն, եթե անտեսենք անգամ այս սխալը, միևնույն է, հեղինակը ոչ մի հիմք չունի պնդելու, թե երրորդ կենտրոնը, որի գոյությունն իսկ տարակուսելի է, պետք է լինի 1,8 մ բարձրության վրա։ Կենտրոնը կարող էր նաև ցած լիներ, այսինքն՝ լծորդումը կարող էր սկսվել պահպանված վերին շարքի անմիջապես եզրից՝ R_1 շառավղով։ Եվ այս դեպքում գմբեթածածկը կունենար 2,6 մ բարձրություն և կմնար տանիքի տակ։ Ուրեմն, փաստական ոչ մի հիմք չկա մեջբերելու եղած կարծիքը և, առավել ևս, գրելու, թե «ինչպես տեսնում ենք, տանիքի սխալ պատկերումը և չափագրական վրիպումները թյուրիմացության մեջ են գցել ինչպես Ն. Տոկարսկուն, այնպես էլ նրանից հետո, գրեթե նույն ձևով արտահայտվող հետազոտողներին»[34]։

Մեր չափագրության համաձայն, հարավ-արևելյան գմբեթածածկից պահպանված մասի կտրվածքը հետևյալ պատկերն ունի (գծ. 2). առաջին շարքը բարձրանում է ուղղաձիգ, հաջորդ երկու շարքերն արված են R շառավղով, որի կենտրոնը տեղադրված է ուղղաձիգ առանցքի վրա, հիմքից 0,6 մ բարձրությամբ։ Վերին երկու շարքի կորագիծը ստացվում է նույն R շառավղով, ինչպես որ ներքևի շարքերինը, այն տարբերությամբ, որ կենտրոնը տեղադրված է ավելի վեր և ուղղաձիգ առանցքից շեղված է։ Այսինքն՝ գմբեթածածկի կորագիծն այս մասում (պետք է ենթադրել նաև դրանից վեր) երկկենտրոն է եղել։ Դժվար է պնդել՝ գմբեթածածկը տարբեր կենտրոններով կառուցված կողաձև է ունեցել, թե միակենտրոն է եղել, բայց վերին երկու շարքը պարզապես խախտված են։ Գմբեթածածկի ձևն ինքնին շատ հետաքրքիր և չափազանց կարևոր հարց է[35]։ Սակայն տվյալ դեպքում կարևորն այն է, որ բոլոր տարբերակներում էլ գմբեթածածկի բարձրությունը չի անցնում 2,6 մետրից։ Սրանից հետևում է, որ գմբեթածածկերը ցածր են եղել և արտաքին հորինվածքում չեն արտահայտվել։

Սակայն բանն այն է, որ, անկախ գմբեթածածկերի բարձրությունից, դրանք չէին կարող և չպետք է արտահայտվեին Տ. Մարությանի նախագծում

---

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, էջ 13։

35 Գմբեթածածկի պահպանված հատվածը մանրակրկիտ չափագրության և ուսումնասիրության կարիք ունի։ Ի դեպ ասենք, որ ընդհանրապես չունենք վաղ շրջանի հայկական հուշարձանների գմբեթների պատշաճ ճշտության չափագրություն և ուսումնասիրություն։ Միայն համեմատական ուսումնասիրությունը թերևս կարող է պարզություն մտցնել այն հարցի մեջ, թե ինչպիսի կողաձև են ունեցել Ավանի գմբեթածածկերը։



Գծ. 2. Ավան, հատակագիծ և հարավ-արևելյան սենյակի գմբեթածածկի կտրվածք

նույնպես, ուր տանիքները դրված են հիշված գոտու մակարդակից ցած։ Միաթեք տանիքների տեղադրման հարցը քննելիս արդեն նշել ենք, որ հյուսիսային ճակատի վրա, ենթադրվող գմբեթաթմբուկների տեղում, պատի միջուկի պահպանված հատվածը վկայում է, որ պատն այստեղ անտարակույս շարունակվել է։ Այսինքն՝ այստեղ որևէ ձևի գմբեթաթմբուկ տեղադրելու մասին խոսք անգամ չի կացող լինել։ Սակայն եթե նկատի առնենք պատից պահպանված հատվածը միայն, անկախ այն բանից՝ շարունակվել է այն թե ոչ, ապա կպարզվի, որ նախագծում արված ութանիստ թմբուկի դեպքում պատի այդ պահպանված

հատվածը կծածկի ենթադրվող թմբուկի հյուսիս-արևմտյան նիստը։ Այս առումով անհասկանալի է մնում՝ Տ. Մարությանը հաշվի է առել պատի այդ հատվածի գոյությունը, թե ոչ։ Թվում է, թե այս հատվածի նկատառումով է, որ հյուսիսային ճակատի դծագրում թմբուկի հյուսիս-արևմտյան նիստը, իբրև այդպիսին, ցույց չի տրված (այն միաձուլվել է թմբուկի հյուսիսային նիստի հետ)։ Մինչդեռ հուշարձանի հատակագիծը և ակսոնոմետրիկ տեսքը պատկերող գծագրերում հյուսիս-արևմտյան նիստն առկա է։ Այսպես են «լուծված» նաև մյուս թմբուկները։

Ինչևէ. առավել էականն այն է, որ նախագծում պատկերվածը տարօրինակ տեսքով և մեր ճարտարապետության մեջ աննախադեպ, ընդամենը երեք նիստ ունեցող մի թմբուկ է, որի կենտրոնական նիստերից մեկը երկարացված է, իսկ մյուսի միայն կեսն է երևում։ Ի դեպ, եթե նախագծում գմբեթատակ հիմքի անկյունային ծածկերը բրգաձև արվեին, այսինքն այնպես, ինչպես իբրև կանոն ընդունված է հայկական բոլոր հուշարձաններում, ապա դրանք ավելի կանոնավոր գմբեթներ կլինեին, քան անկյունային սենյակներինը և Ավանի տաճարը կստացվեր ինը գմբեթանի։

Պահպանված պատահատվածը բացառում է նաև բոլորակ թմբուկի գոյությունը։ Գուցե այս հանգամանքն է ստիպել Տ. Մարությանին, որը համոզվածությամբ պնդելով հանդերձ, թե Թ. Թորամանյանի նշած «բոլորակ շարքերը» վերաբերում են փոքր գմբեթի արտաքին պատին, իր իսկ նախագծում թմբուկները պատկերել ոչ թե բոլորակ, այլ ութանիստ։

Ի վերջո կուզենայինք մեջբերել Տ. Մարությանի այն միտքը, թե «մինչև այժմ հետազոտողները զբաղվել են միայն տեսական հարցերով։ Արդ փորձ է արվում խնդրին մոտենալ մի այլ՝ նախագծող ճարտարապետի դիրքերից, նկատի ունենալով, որ Ավանը ստեղծողն իր գործին ձեռնամուխ է եղել որպես նախագծող՝ նորն ստեղծող ճարտարապետ»[36]։ Արդ, եթե մի պահ վերանանք այն բանից, որ Ավանում գմբեթները չէին կարող արտահայտվել արտաքին հորինվածքում և ընդունենք նույնիսկ, որ գմբեթների ծածկերը կարող էին մասամբ մտած լինել տանիքների տակ, և գմբեթատակ հիմքի անկյունները ծածկված լինել մեկ այլ երկթեք ծածկով, և որ թմբուկից միայն երկուսուկես նիստ կարող էր երևալ՝ այն էլ բարձրությամբ անհավասար, ապա անհերևակայելի է, որ Ավանի տաճարը կառուցողը՝ լինի նախագծող, թե տեսաբան, կարող էր չորս գմբեթի երեսուներկու նիստը նախապես շարել և հետո դրանցից քսաներկուսը թողնել պատի շաղախի մեջ։

Վերը բերված փաստերը թույլ են տալիս եզրակացնելու, թերևս նաև համոզված պնդելու, որ Ավանի տաճարի անկյունային սենյակների գմբեթածածկերը չէին կարող և չեն արտահայտվել արտաքին հորինվածքում։ Ավանի տաճարն ունեցել է միայն մեկ՝ կենտրոնական գմբեթ, այնպես, ինչպես մեզ հասած բոլոր ավանատիպ և Հայաստանի վաղ միջնադարի բոլոր գմբեթավոր հուշարձանները[37]։

ԳՄԲԵԹ—Ավանի տաճարի գմբեթից ոչինչ չի պահպանվել։ Որոշ ուսումնասիրողներ ժամանակին հուշարձանի վրա պահպանված պատի հատվածը, ինչպես նշել ենք, սխալմամբ ընկալել են իբրև թմբուկ։ Եվ, այսուհանդերձ, տաճարի համար առաջադրվել են գմբեթի բազմաթիվ տարբերակներ. ընդ որում՝ ոչ միայն ավանատիպ կամ ընդհանրապես հայկական, այլև նույնիսկ բյուզանդական գմբեթների օրինակով։ Հիմնական տարբերակների սպառվելը հանգեցրեց այն բանին, որ այժմ տարբերակ են առաջադրում նույնիսկ գոյություն ունեցող ենթադրությունների համադրումով[38]։ Տարբերակների առատու-

---

36 Տիրան Մարության, նշվ. աշխ., էջ 20։

37 Տ. Մարությանի առաջադրած Ավանի վերակազմության երկրորդ տարբերակին, որը բնավ ընդունելի չէ, չենք անդրադառնա, քանի որ ըստ հեղինակի հավանականը առաջին տարբերակն է։

38 Ս. Մայիլովը իր վերոհիշյալ հոդվածում ներկայացրել է Ավանի ակսոնոմետրիկ տեսքը պատկերող մի գծագիր, ուր հուշարձանի հիմնական ծավալն արված է ըստ Ռ. Աղաբաբյանի,

թյունն ու բազմազանությունը ինքնին թերևս բավարար ապացույց է այն բանի, որ Ավանի գմբեթի ճշմարիտ ձևը չի գտնված. թեկուզ բացառված չէ, որ այն լինի առաջադրվածներից որևէ մեկը։ Եվ այս տարբերակներն ինչքան էլ շատանան, միևնույն է, ոչ մի պարզություն չեն կարող մտցնել հարցի մեջ։

Գմբեթատակ հիմքի առիթով արդեն նշել ենք, որ փոխանցման համակարգը, իբրև փաստ, թույլ է տալիս հղրակացնելու, որ թմբուկը ներսում շըր-



Գծ. 3. Ավան,
կտրվածք դեպի արևմուտք



Գծ. 4. Ավան,
հյուսիսային ճակատ

ջանաձև է եղել։ Իսկ ինչ վերաբերում է թմբուկի արտաքինին, ապա մեր կարծիքով որևէ ձև առաջադրելու ոչ մի հիմք չունենք։ Վաղ շրջանի հուշարձաններից միայն շնչին մասն է մեզ հասել սկզբնական գմբեթով։ Ավանատիպ տաճարներից շորսում են պահպանվել գմբեթները, և շորսի թմբուկներն էլ արտաքինից տարբեր լուծումներ ունեն։ Թմբուկի ձևը հուշող որևէ օրինաչափություն չի նկատվում նաև մյուս տիպերի շրջանակներում։

Անորոշ է մնում նաև գմբեթի ծածկի ձևը։ Եթե ընդունենք, որ Ավանը կըղմինդրե ծածկ է ունեցել (վաղ շրջանի հուշարձանների գերակշռող մասում կղմինդրի մնացորդներ են հայտնաբերվել), ապա այս դեպքում էլ հնարավոր չէ կռահել՝ սաղավարտաձև, թե բրգաձև։ Վաղ շրջանի բազմաթիվ հուշարձաններից միայն երեքում են պահպանվել ծածկերը. Կարմրավորում՝ սաղավարտաձև, Մրենում և Արագածի բազմաբսիդ եկեղեցում՝ բրգաձև։ Ուստի ոչ մի կռահմամբ կամ քննությամբ չի կարելի որոշակիացնել Ավանի գմբեթի ծածկի ձևը։

Ուրեմն, Ավանի տաճարում և բոլոր այն հուշարձաններում, ուր գմբեթները չեն պահպանվել, դրանց ճշմարիտ ձևի հայտնաբերման խնդիրը (էլ չենք խոսում դրանց ճշգրիտ չափերի, լուսամուտների քանակի, ճարտարապետա-

---

Թմբուկը՝ ըստ Ն. Տոկարսկու և Գ. Ջուբինաշվիլու, իսկ գմբեթատակ հիմքի անկյուններում տեղադրված փոքր աշտարակները՝ ըստ Ա. Թորամանյանի։ Գծագրի մակագրության մեջ հեղինակը գրում է, թե գմբեթի վերակազմությունն է իրեն պատկանում։ Սակայն այս դեպքում պարզ չէ, թե ով է հավելել տաճարի հարավային ճակատով մեկ ձգվող գոտին, որը Ռ. Աղաբաբյանի նախագծում չկա։ Այս գծագրին չենք անդրադառնա, քանի որ նշված հեղինակների կարծիքներին արդեն անդրադարձել ենք։ Ինչ վերաբերում է Ս. Մայիլովի հոդվածում զետեղված «վերակազմություններին» շարքին, ապա հարկ է նկատել, որ դրանց գերակշռող մասն արված է նյութի անտեղյակությամբ, բացահայտ և կոպիտ սխալներով։

կան առանձին մանրամասերի և դեկորատիվ մշակման մասին) առայժմ, թերևս նաև ընդմիշտ, մնում է անլուծելի: *Եվ եթե այնուամենայնիվ հարկ է լինում վերակազմության նախագծերում գմբեթ դնել, ապա անհրաժեշտ է շեշտել, որ այդ հավելումը զուտ պայմանական է և սուբյեկտիվ*[39]:

Հուշարձանների վերակազմության ժամանակ ընդհանրապես և Ավանի տաճարի դեպքում մասնավորապես, առաջնահերթ խնդիր է պարզել ոչ թե ինչպիսի տաճար կարող էր կառուցել Յոհան կաթողիկոսը և ոչ էլ մանավանդ՝ ինչպիսի տաճար կարելի է նախագծել այժմ հուշարձանի պահպանված մասերի և V—VII դդ. բնորոշ առանձին մանրամասերի համադրումով, այլ ըստ կարելվույն ճշտել, թե ինչպիսին է եղել Ավանի կանգուն տաճարը:

Ինչպես արդեն նշել ենք, Ավանի տաճարը շատ առումներով եղակի կառույց է: Այն հայ ճարտարապետության թերևս միակ հուշարձանն է նաև, որն ուսումնասիրողների մեծ մասը կամա թե ակամա համարել է ոչ կատարյալ: Այս հանգամանքը հիմնականում «արդարացվել է» այն համոզմամբ, թե տաճարը խաչաձև հորինվածքի նախապատրաստական, մինչհռիփսիմեական շրջանի գործ է, թեմայի մշակման փուլ է կամ նախատիպ, որը կատարելության հասավ միայն Հռիփսիմեի տաճարում: Հուշարձանի անկատարության արձանագրումն են Ա. Յակոբսոնի դիտողություններն այն մասին, թե տաճարի ներսում գերիշխում էր ուղղահայացը և ներքին մշակվածության աստիճանն ի ցույց էր դնում, որ Ավանը կենսրոնագմբեթ հուշարձանների բնավ առաջին փորձը չէր, մինչդեռ արտաքին հորինվածքում ճարտարապետը չէր կարողացել ազատվել բազիլիկ կառույցների ազդեցությունից[40]: *Եթե «շինության արտաքին պատկերը չի արտացոլում նրա ներքին կառուցվածքը»*[41], *ապա սա ևս հուշարձանի անկատարելության մասին է խոսում: Այն, որ ներսից կատարյալ գմբեթավոր հուշարձանը, ըստ Լ. Աղաբաբյանի նախագծի, արևելյան և արևմտյան ճակատներում մեխանիկորեն կրում է անտիկ՝ սկզբունքորեն այլատիպ հորինվածքի լուծումը, նույնպես անկատարելության վկայություն է: Կատարելությունից չափազանց հեռու է նաև Գ. Զուբինաշվիլու պատկերացրած հուշարձանը՝ «խիստ զետնամած, ճապաղած ուղղանկյուն մարմնով, որի վրա դրված է համանման, չափերով փոքր, անկյունները հատած թմբուկ»*[42]: *Եթե Ավանի տաճարը իրոք այնպիսի է եղել, ինչպես ներկայացված է վերը բերված դիտողություններում, ապա միանգամայն իրավացի էր Գ. Զուբինաշվիլին, երբ գրում էր, թե հուշարձանը զանգվածների պատահական զուգակցմամբ ստեղծված մի շինություն է՝ զուրկ համաչափությունից ու կառուցիկությունից, և «չձևակերտված տաճարի անօգնական զանգվածները» կառուցող ճարտարապետը «չի ըմբռնել գեղարվեստական մտահղացումը», «չի կարողացել լուծել առաջադիր խնդիրը», եղել է «սկսնակ» ու «ապաշնորհ», «եթե մեծ շնորհք ունենար, համենայն դեպս ավելի հաճելի շինություն կստեղծեր»*[43]:

Սակայն բանն այն է, որ վերը բերված դիտողությունները և գնահատականները վերաբերում են նշված հեղինակների իսկ վերակազմած կամ մտապատկերած տաճարներին, բայց ո՞չ Ավանի տաճարին կամ նրա կառուցողին: Արևմտյան ճակատում պահպանված քիվի սխալ ընկալումը հանգեցրեց ծածկերի և ծավալների սխալ վերակազմության, որի հետևանքով էլ տաճարը

---

39 *Ընդ որում, սաղավարտաձև ծածկ աննկիս, կարծում ենք ավելի ճիշտ կլինի կրկնել Կարմրավորի ծածկը, անկախ այն բանից, որ դժվար է պնդել՝ կդմինդրե այս ծածկի կորագիծը, որ չի հետևում գմբեթի սֆերայի կորությանը, վաղ շրջանի հուշարձանների համար կանոնիկ լուծում էր, թե՞ կոնկրետ Կարմրավորինն էր:*

40 А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII вв., с. 21

41 О. Х. Халпахчьян, Архитектура Армении, («Всеобщая история архитектуры», М.—Л., 1966, с. 216).

42 Г. Н. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, с. 20.

43 Г. Н. Чубинашвили и Н. П. Северов, Пути грузинской архитектуры, Тбилиси, 1936, с. 37, Г. Н. Чубинашвили, Памятники типа Джварн, с. 111—112, его же, Разыскания по армянской архитектуре, с. 15, 20, 38.

պարձավ գետնամած՝ առիթ տալով աղերսներ հաստատելու բազիլիկ և նույնիսկ անակ կառույցների հետ։ Հետագայում հավելված պատահատվածը սխալմամբ թմբուկի մնացորդ համարվեց, և դրա հետևանքով էլ թմբուկը և հուշարձանը ստացվեցին գետնամած ու ճապաղ։ Ուշագրավ է, որ հուշարձանին վերագրվող այս անկատարելությունները վիճարկվեցին, տաճարը լավ թե վատ «պաշտպանության» տակ առնվեց, սակայն ոչ մի ուսումնասիրող նույնիսկ կասկածի տակ չառավ սկզբից ի վեր հիմք ընդունած ճակատոնային լուծման իսկությունը։ Եվ սա այն դեպքում, երբ ստացված վերակազմություններում առանձին ճակատների և արտաքին ու ներքին լուծումների անհամապատասխանությունը հակասում էր հայ ճարտարապետության նույնիսկ հիմնական սկզբունքներին։ Պատճառը թերևս տեսական այն դրույթն էր, ըստ որի իրր ամեն մի տիպ քայլ առ քայլ պիտի ընթանար զարգացման ուղիով՝ վերջնական ձևակերտման հասնելու համար։ Այս կերպ իր տիպի մեջ հասած կառույցներից իրավամբ հնագույն տաճարը գտավ իր «անկատարելությունն» արդարացնող միակ տեսությունը, մյուս կողմից էլ տեսական դրույթը գտավ իր միակ «անկատար» հուշարձանը՝ իբրև փաստական ապացույց։

Մեր համոզմամբ Ավանն ունեցել է կատարյալ կենտրոնագմբեթ հորինվածք՝ իր տիպի և ընդհանրապես գմբեթավոր կառույցների հիմնորոշ սկզբունքներով ստեղծված։ Եվ, այնուամենայնիվ, եթե այն առնչվում է բազիլիկ եկեղեցիների հետ, ապա միմիայն արխայիկ մանրամասերով, որոնք տաճարի վաղ կառուցված լինելն են վկայում։ Մինչև այժմ եղած վերակազմություններում Ավանի տաճարը տարբերվում էր նմանատիպ հուշարձաններից, և այդ պատճառով ուսումնասիրողները դրանք անվանել են Հռիփսիմեի կամ Ավան-Հռիփսիմեի տիպ, ընդունելով հանդերձ Ավանի հնագույն լինելու փաստը։ Հիմք ընդունելով մեր վերակազմությունը, կարծում ենք, որ հայ և վրաց ճարտարապետության մեջ եղած համանման հուշարձանների այս խումբն իրավամբ կարելի է կոչել ավանատիպ։

Տաճարի հարավային խորանի արևելյան որմնամույթի վերնամասը սխալ է վերակառուցված։ 1920-ական թվականներից մեզ հասած լուսանկարները վկայում են, որ գմբեթակիր կամարները հանգչում են անմիջապես իմպոստներին, և դրանց վրա քիվով ավարտվող շարք գոյություն չի ունեցել։ Այս սխալը, որ վաղուց արդեն մտել է մասնագիտական գրականության մեջ, ցավոք, նոր չափագրությունների և լուսանկարների միջոցով մինչև օրս էլ շարունակում է շրջանառության մեջ մնալ։ Հետագա թյուրիմացություններից խուսափելու համար անկասկած և անհապաղ պետք է հեռացվի քիվով ավարտվող այդ շարքը և ըստ լուսանկարի պետք է վերաշարվի ոչ միայն այս հանգույցը, այլև ընդհանրապես հարավ-արևելյան անկյան գմբեթային փոխանցման՝ կամարներով և առագաստներով իրականացված համակարգի ինքնատիպ և չափազանց արժեքավոր այդ դրվագը։ Մանավանդ, դրան վերաբերող գրեթե բոլոր քարերը պահպանվել են։

Առաջնահերթ են հուշարձանի և նրա տարածքի մանրամասն և համակողմանի պեղումները, և մասնակի պեղումներից (1938, 1940, 1950, 1968) հայտնաբերված, իսկ այժմ քարակույտերի վերածված քարերի դասակարգումը և ուսումնասիրումը, որոնք, թերևս, նոր նյութ կտան տաճարի ամբողջական կամ նրա առանձին հանգույցների կամ մանրամասների փաստացի վերակազմության համար։ Պատմիչի վկայությամբ, «...շինեցն իսկ ինքնին Յոհան զպայծառակերտ քաւարանն սուրբ և շուրջանակի նորա յարդարեաց կալուածս կայանի իւրոյ»[44]։ Ինչպես նկատել է Կ. Ղաֆադարյանը, «Եկեղեցու մոտ նրա կաթողիկոսարանն է եղել, ինչպես նաև կաթողիկոսարանի հարակից շենքերը՝ միաբանների բնակարանները և այլն... ի հայտ են եկել տաճարի շրջապատում կառուցված շենքերի պատեր, տարբեր բարձրությամբ, որոնց մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ այդ շենքերը բացելու նպատակով այստեղ

---

44 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 72։

հատուկ պեղումներ կատարվեն։ Սակայն այդ շենքերը կան, և Դրաոխանակերտցին տեսել ու հիշատակել է նրանց գոյությունը։ Եկեղեցու արևմտյան կողմում կան շենքերի մնացորդներ, որոնց տաճարից ավելի վաղ կառուցված լինելն անկասկած է։ Եկեղեցու արևմտյան պատին զուգահեռ ի հայտ եկած երկարաձիգ եռաստիճան հիմնապատի գոյությունը և այնտեղ դտնված մի քանի հնագույն քանդակազարդ բեկորները ցույց են տալիս, որ այդտեղ գոյություն են ունեցել հին, IV կամ V դարերում կառուցված շենքեր, հավանաբար եռանավ բազիլիկ տաճար»[45]։ Եվ, վերջապես, պեղումների շնորհիվ տաճարի հարավ-արևելյան մասում գտնե «կհայտնաբերվի» ըստ ականատեսների ժամանակին բացված, իսկ այժմ ասֆալտածածկի տակ մնացած՝ վաղ միջնադարի մի դամբարան, որն ինքնին արժեքավոր է, եթե անգամ դա Ավանի տաճարը կառուցող Յոհան կաթողիկոսինը չէ, որի մասին պատմիչն ավանդում է. «Եւ անդէն վախճանեալ բերաւ մարմին նորա ի գեղն Աւան, յեկեղեցին, զոր ինքն շինեաց»[46]։

Կարծում ենք, որ Ավանի տաճարը կարժանանա համապատասխան կազմակերպությունների ուշադրությանը։ Պեղումները, վերակառուցման մեջ թույլ տրված անճշտությունների սրբագրումը, հուշարձանի և նրա տարածքի բարեկարգումը հայ և ընդհանուր քրիստոնեական ճարտարապետության այս եզակի և արժեքավոր նմուշի պահպանման համար առաջնահերթ խնդիր են։

РЕКОНСТРУКЦИЯ АВАНСКОГО ХРАМА

ВААГН ГРИГОРЯН

Резюме

Существующие проекты реконструкции Аванского храма неприемлемы как из-за допущенных в них фактических неточностей и ошибок, так и с точки зрения лежащих в их основе исходных интерпретаций, приведших к неправильным заключениям и оценкам.

В предлагаемой реконструкции Аванский храм решен как подлинно центрально-купольная композиция, отвечающая основным принципам памятников аванского, а также купольных сооружений раннего средневековья Армении вообще.

---

45 Կարո Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 60—61։

46 «Ներսէսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 78։